

# ՀԻՒԱՆԴԱՊԱՀ ՈՐԴԻՆ



Թարգմ.

Տիկին Բիհրեղ

855  
4X-52

Թաթիւն

Յակարան „Խորլուրան“ Բնկ. Վէլեհամինովով. 18.

600 937 83

8 FEB 2013

2.145) 653m.

6 1920m.

-6 N0N 2011


85v

W-52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԴԻՆ

Այ

1006  
413/1



Թիֆլիս

Տպարան „Առևլուստ“ Բնկ. Վեհամինովսկ. 18.

1910

ՀԻՒԱՆԴԱԳԱՀ ՈՐԴԻՆ



Մարտ ամսի մի անձրեւային առաւօտ  
Նապօլի քաղաքի գլխաւոր հիւանդանոցի  
գոնապանի մօտ եկաւ մի գիւղացի երե-  
խայ՝ ամբողջովին ցեխուտւած ու անձրեւց  
թրջւած. նա կոնստակին բոնսիծ ունէր մի  
կապոց:

Դոնապանին տալով մի տոմսակ՝ նա  
ուզում էր նրանից իմանալ իր հօր տեղը:

Շատ սիրուն տղայ էր. թխաղէմ, ձւա-  
ձև երեսով, մտածկոտ աչքերով ու հաստ-  
լիկ շրթունքներով, որոնց միջից փայլում  
էին ճերմակ ատամները:

Նա եկել էր Նապօլի շրջակայքում գլ-  
տընւող մի գիւղից: Անցեալ տարի նրա  
հայրը գնացել էր Ֆրանսիա աշխատելու:  
Բայց ճանապարհին, Նապօլի վերադառնա-  
լու ժամանակ, յանկարծ հիւանդանում է,  
ու այդ մասին գրում է տուն ընտանիքին,  
որ ինքը հիւանդ պառկած է հիւանդանո-  
ցում: Կինը շատ վշտանում է և ուզում է  
գնալ ամուսնու մօտ, բայց չէր կարելի  
տունը անտէր թողնել. մի երեխան հիւանդ

պառկած էր, իսկ միւսը՝ ծծկեր: Նա մի քիչ փող հաւաքեց ու մեծ որդուն ուղարկեց նապօլի, որ գնայ իր տատայի մօտ, ինչպէս կանչում են փոքրիկ իտալացիները իրանց հօրը:

Տղան ոտով երեսուն վերստ ճանապարհ անցնելով՝ հասել էր նապօլի:

Դոնապանը կարդալով նամակը՝ կանչեց հիւանդանոցի ծառային ու հրամայեց նրան, որ տղային տանէ հիւանդասրահը հօր մօտ:

— Հայրդ ով է, — հարցրեց ծառան:

Տղան սարսափելով՝ թէ չըլինի յանկարծ մի վառ բան լսէ, հօր անունը ասաց: Ծառան չէր յիշում այդպիսի անուն:

— Ծեր մշակ է, — հարցրեց նա. — որ եկել է հեռու տեղից:

— Այն, բանւոր է, միայն ոչ ծեր, — սարսափած պատասխանեց տղան:

— Հեռու տեղից, բայց ե՞րբ է եկել հիւանդանոց:

Տղան նայեց նամակին:

— Հինգ օր կը լինի: Ծառայողը մտածմունքի մէջ ընկաւ ու սկսեց մտաբերել:

— Հա, զիտեմ. չորրորդ հիւանդասրահումն է, ամենից վերջի մահճակալը.

— Ի՞նչ. մի՞թէ շատ վատ է նա. — հարցրեց տղան՝ կամածելով:

Ծառան լուռ նայեց նրան ու ասաց. — Արի, գնանք:

Նրանք բարձրացան սանդուխքներով, անցան նախասենեակը և հասան մի մեծ ու մաքուր սենեակ՝ երկու կարգ մահճականերով:

— Գնանք, — կրկնեց ծառայողը:

Տղան խոնարհութեամբ գնում էր նրայետևից՝ ամեն րոպէ սարսափած շուրջը նայելով: Շուրջը տեսնում էր նա դեղնած ու տանջւած դէմքեր: Մի քանիսը պառկած էին փակած աչքերով, կարծես մեռած լինէին. միւսները կենդրոնացած նայում էին տարածութեան մէջ, աչքերը չուծ, կարծես սարսափած լինէին. ոմանք հառաչում էին, ինչպէս երեխաներ: Սենեակը մութն էր, օդը ծանրացած դեղերի հոտով. երկու գլխութեան քոյրեր անցնում էին անկողինների մօտով՝ սրւակները ձեռքներին:

— Ահա քո հայրը, — ասաց, վերջապէս, ծառան բարձրացնելով մահճականերից մէկի վարագոյրը:

Հիւանդի ձեռքը անշարժ կերպով ընկած էր վերմակի վրայ: Տղան բռնեց ձեռքը և խորը հառաչելով ընկաւ հօր կրծքին: Հիւանդը չըշարժւեց: Տղան վերկացաւ ու սկսեց կամաց լաց լինել: Հայեացքը դարձրեց դէպի նա, երկար նայեց և թւում էր,

թէ ճանաչեց, բայց ոչ մի խօսք չասեց... Խեղճ, սարսափելի փոխւել էր,—որդին չէր ճանաչիլ նրան, —սպիտակել է, միտուքը երկար, երեսը ուռել, սևացել, աչքերը ներս ընկած, շրթունքները կախւած... Բոլորովին ուրիշի դէմք է: Առաջւանն են միայն ճակատը և յոնքերը...

—Տատա, իմ Տատա, —ասաց տղան, — ես եմ: Զե՞ս ճանաչում: Զիշլիօն եմ, քո Զիշլիօն: Գիւղից եմ եկել, մայրիկս ուղարկեց: Մի լաւ նայիր ինձ: Զե՞ս ճանաչում, գոնէ մի խօսք ասա:

Հիւանդը նայեց և նորից փակեց աչքերը:

—Տատա, ես քո որդին եմ, քո Զիշլիօն:

Հիւանդը չէր շարժւում և շնչում էր շատ ծանր: Տղան աթոռը մօտեցրեց մահճակալին, նստեց և սպասում էր՝ աչքը չը հեռացնելով հօրից:

«Ահա կրգայ բժիշկը, —մտածում էր նա, —և կասէ, ինչ է պատահել սրան»:

Տղան ընկաւ խոր մտածմունքի մէջ. նա մտածում էր հօր մասին, յիշեց թէ ինչպէս հայրը գնում էր Թրանսիա աշխատելու. ինչպէս հրաժեշտ տւին նրան շոգենաւում, ինչպէս շատ բան էին սպասում և որքան յոյս էին դրել նրա օտարութիւն գնալու վրայ, ինչպէս յուսահատւել էր մայ-

ըր, երբ նրանից ստացաւ վերջին նամակը: Նա շարունակ մտածում էր հօր մահւան մասին. նա երևակայում էր նրան արդէն մեռած, մօրը՝ սկ շորեր հագած, ընտանիքը աղքատութեան մէջ...

Ժամանակը շատ դանդաղ էր անցնում: Յանկարծ մէկը թեթև կերպով դիպաւ տղի ուսին. նա ցնցւեց, նրա առաջը կանգնած էր մի փանական կոյս:

—Ի՞նչ է պատահել իմ հօրը. —հարցրեց նա հէնց նոյն վայրկեանին:

—Հը՞, սա քո համյրն է, — փաղաքշանքով հարցրեց կոյսը:

—Այո, ես եկել եմ գիւղից: Ինչով է նա հիւանդ:

—Ահա շուտով կրգայ բժիշկը, —պատասխանեց նա ու գնաց ուրիշ ոչ մի խօսք չասելով:

Կէս ժամից յետոյ զանգը տւին: Ներս եկան բժիշկը, իր օգնականը և երկու գթութեան քոյրեր ու սկսեցին նայել հիւանդներին, կանգնելով ամեն մէկի մահճակալի մօտ: Տղին թւում էր, թէ նրանք չեն վերջացնելու երբէք: Անհանգստութիւնից խիստ աանջւում էր նա: Վերջապէս նրանք մօտեցան հարևան մահճակալին: Բժիշկը բարձրահասակ, մի փոքը կուցած, խիստ դէմքով մի ծերունի էր: Նա դեռ հարևան մահճակալի մօտ էր, որ տղան վեր կացաւ տե-

դից։ Բժիշկը մօտենալով հօրը՝ նայեց տղի վրայ, որը չըկարողացաւ պահել իրան ու լաց եղաւ։

—Սա հիւանդի տղան է, առաւօտ եկաւ գիւղից, —ասաց զժութեան քոյրը։

Բժիշկը՝ ձեռքը դնելով տղի ուսին՝ կը ռացաւ դէպի հիւանդը, քննեց զարկերակը և պուխը շարժելով կամաց կերպով ինչոր բան հարցրեց զժութեան քրոջը։

—Էլի նոյնն է, —պատասխանեց նա։

—Շարունակեցէք առաջւայ պէս։

Տղան համարձակութիւն առնելով հարցրեց արտասուքը աչքերին։

—Ի՞նչ է պատահել հօրս։

Մի վախենայ, մանուկս, —պատասխանեց բժիշկը. —Նա ոօժա ունի երեսի վրայ. հիւանդութիւնը լուրջ է, բայց դեռ յոյս կայ։ Մնան մօտը. նա թեթևութիւն կըզգայ, եթէ դու մնաս մօտը։

—Բայց նա չի ճանաչում ինձ. —յուսահատւած բացականչեց տղան։

—Կը ճանաչէ. գուցէ վաղը ճանաչէ. պիտի յուսանք, քաջացիր։

Տղան հիւանդապահ դարձաւ. նա խնամում էր հօրը, ինչքան կարող էր. ուղղում էր վերմակը, կոանում էր դէպի հայրը, ամեն մի տնքոցի ժամանակ։ Երբ քոյրը խմելու բան էր բերում, տղան վերցնում էր բաժակը և գգալով խմեցնում էր հօրը։

Սա նայում էր, բայց երեսում էր, որ դեռ չէր ճանաչում որդուն։ Սակայն որդին մի փոքր մխիթարուում էր նրանով, որ օր-օրի վրայ հօր հայեացքը աւելի երկար էր կանգ առնում իր վրայ, մանաւանդ, երբ սրբում էր իր արտասուքները։

Այսպէս անցնում էին օրերը. Գիշերը տղան քննում էր անկիւնում, երկու աթոռների վրայ, իսկ առաւօտները գալիս էր հօր անկողնի մօտ։

Մի անգամ նրան թւաց, թէ հիւանդի աչքերում ինչոր բան շողաց, կարծես մի բան էր մտածում նա. յետոյ կարծես փաղաքանք էին արտայայտում նրանք՝ որդու քնքոյշ ձայնի դիմաց, մի անգամ նա նոյնիսկ շարժեց շրթունքները, կարծես ինչոր բան էր ուզում ասել։

Մի փոքր ինքնամուացութիւնից յետոյ՝ հայրը բանալով աչքերը կարծես որոնում էր որդուն։ Բժիշկը նկատեց, որ նա մի քիչ դէպի լաւն է գնում։ Երեկոյեան կերպելու ժամանակ տղին թւաց՝ թէ հայրը ժպտաց. Այդ բանը որդուն սիրտ տւեց, յուսաղեց. ովլ գիտէ, գուցէ հայրը բոլորը լսում ու հասկանում է...»

Տղան սկսեց խօսել. նա հօրը պատմում էր մօր ու փոքր քոյրերի մասին, ասում էր թէ ինչպէս ինքը և հայրը միասին պիտի վերադառնան տուն, սիրտ էր տալիս հօրը

Հերմ ու քնքոյշ խօսքերով։ Թէև Զիշիլիօն երբեմն կասկածում էր, արդեօք, հասկանո՞ւմ է հայրը թէ ոչ. բայց և այնպէս շարունակում էր խօսել, որովհետեւ հայրը, ըստ երևոյթին, բաւականութեամբ լսում էր քնքոյշ ձայնը։

Այդպէս անցաւ էլի երեք օր. հօր դըրութիւնը շարունակ փոփոխւում էր. կամ մի քիչ լաւանում էր, կամ անսպասելի կերպով էլի վատանում։ Զիշիլիօն ամբողջովին նւիրւել էր իր հոգսերին։ Գթութեան քոյրը ամեն զիշեր երկու անգամ նրա համար հաց ու պանիր էր բերում։ Նա մերենայաբար ուտում էր, համարեայ չէր նկատում ինչ է կատարւում իր շուրջը։

Հիւանդներից ոմանք մեռնում էին։ Գիշերը գթութեան քոյրերը վազվզում էին դէս ու դէն։ Այցելութեան եկած ազգականները լաց էին լինում ու գնում յուսահատւած, — մի ամբողջ շարք վշտալի, մոայլ հիւանդանոցային տեսարաններ, որոնք ուշից ժամանակ կըսարսափեցնէին նրան։ Այսպէս անցնում էին օրերը, ժամերը։ Զիշիլիօն բոլոր ժամանակ հոգս էր քաշում ու խնամում էր՝ ցնցւելով հօր ամեն մի տնքոցից ու նայւածքից, երբեմն յուսադրուելով, երբեմն էլ յուսահատւելով։ Հինգերորդ օրը հօր դըրութիւնը յանկարծ վատացաւ. բժիշկը շարժեց զլուխը, կարծես

ասելիս լինէր. «ամեն բան վերջացած է»։ Զիշիլիօն հեկեկաց։ Հօր դըրութիւնը խսկապէս վատացեւ էր, բայց տղին թւում էր, թէ նա ուշքի է եկել։

Նա նայում էր աւելի ուշադրութեամբ ու աւելի գիտակցաբար, խմում էր միայն տղի ձեռքից և խօսելու ջանք էր գործադրում։

Այդ ջանքերը այնպէս պարզ էին, որ Զիշիլիօն բոնում էր հօր ձեռքը խելացնոր յոյսով, որ բժիշկը սխալում է, որ իր հայրը կառողանայ, և ուրախ կրկնում էր.

— Մի վախենայ, Տատա, դու կառողանաս և մենք միասին կըսնանք տուն, մայրիկի մօտ. միայն մի քիչ էլ համբերիր։

Ժամի չորսն էր։ Տղան նստած էր տանջւած ու վախեցած, սակայն յոյսը չըկտրած և ցրւած մտքերով։ Այդ միջոցին հարեան սենեակից ոտնածայն լսեց ու մէկը բարձր ասաց։

— Յաեսութիւն, քնյորիկ։

Զիշիլիօն ցնցւեց, վեր թռաւ ու ճչաց։ Ներս եկաւ մեծ կապոցը ձեռին մի մարդ, նրա յետեկից էլ գթութեան քոյրը։

— Զիշիլիօ! — բացականչեց նա՝ նայելով տղի վրայ ու վազելով դէպի նա։

— Հայրիկ…

Ուրախութիւնից նչասպառ՝ տղան ընկաւ հօր գիրկը։

Զանազան կողմերից վագեցին գթութեան քոյրերը, հիւանդապահները, բժշկի օգնականը և ամենքը կանգ առան զարմացած։ Տղան կարծես համրացել էր, չէր կարողանում ոչ մի խօսք ասել։

—Իմ Չիչիլիօ։—բացականչեց հայրը՝ համբուրելով նրան ու նայելով դէպի հիւանդը։—Չիչիլիօ, զաւակս, ի՞նչպէս պատահեց այս բոլորը։ Քեզ օտարի մօտ տարան։ Իսկ ես... ես ինչպէս անհանգստանում էի, որ դու չես գալիս, —մայրդ զբել էր, որ քեզ ուղարկել է ինձ մօտ։ Խեղճ Չիչիլիօ։ Քանի՞ օր է, որ դու այստեղ ես։ Ի՞նչպէս առաջացաւ այս շփոթութիւնը։ Շատ մտածելուց պլուխս քիչ էր մնում տրաքւէր, շարունակ քեզ էի սպասում... Գիտե՞ս, դու մեծացել ես։ Մայրդ ի՞նչպէս է։ Ի՞նչպէս են քոյրերդ։ Ի՞նչպէս են նըրանք բոլորը։ Ես դուքս եմ գալիս հիւանդանոցից, գնանք։ Աստուած իմ, ով կարող էր այս բոլորը երևակայել։ Չիչիլիօն խորապէս զգացւած՝ շարունակ կրկնում էր՝ հօրից չը պոկւելով.

—Ո՞րքան ուրախ եմ, որքան ուրախ։ Ինչպիսի սարսափելի, տանջող օրեր էին...»

—Դէ գնանք—ասաց հայրը։—Երեկոյեան կը հասնենք տուն։ Գնանք։

Տղան յետ նայեց իր հիւանդին, որը

այդ ժամանակ աչքերը բացել ու նայում էր դէպի նա։

—Ո՞չ, Տատա, սպասիր, —շտապով ասաց Չիչիլիօն։—Ես չեմ կարող։ Նայիր այս ծերունուն... ես հինգ օր խնամել եմ սըրան։ Տես, նա դէպի ինձ է նայում։ Ե՛ս եմ կերակրում նրան։ Նա կարծես շարունակ ինձ կանչում է իր մօտ։ Ես վաղը կը վերադառնամ տուն։ Հիմայ թոյլ տուր ինձ մնալ այստեղ, լաւ չէ սրան թողնել։ Տեսնո՞ւմ ես, նա նայում է դէպի ինձ։ Թէ ով է նա, ես չըգիտեմ, բայց ցանկանում է, որ ես մնամ իր մօտ... Նա մեռնում է միայնակութեան մէջ... Հայր, թող ինձ սրա մօտ...»

—Ի՞նչ լաւ տղայ է, —ասաց բժշկի օգնականը։

Հայրը չէր վճռում՝ նայելով մէկ Չիչիլիօյին, մէկ հիւանդին։

—Ո՞վ է սա, —հարցրեց նա։

—Գիւղացի է, ինչպէս և դուք, —պատասխանեց բժշկի օգնականը։—սա էլ հեռու տեղից է և հիւանդանոց է մտել ձեզ հետ միենոյն օրը։ Նրան բերին ու զբը կորցրած։ Նա ոչինչ չըկարողացաւ ասել։ Գուցէ նա էլ ընտանիք ունի։ Հաւանական է, որ նա կարծում է, թէ իր երեխաներից մէկն է եկել։

Հիւանդը աչքը չէր հեռացնում տղից։

—Ուրեմն, Զիշիլիօ, մոա,—վերջապէս  
ասաց հայրը:

—Մնա այստեղ,—կրկնեց հայրը,—իսկ  
ես գնամ տուն ու հանգստացնեմ մօրդ:  
Ահա քեզ մի սկսող\*): Մնաս բարով, սիրե-  
լիս, ց'տեսութիւն:

Նա պինդ համբուրեց որդուն, նորից  
հայեացքը ձգեց նրա վրայ, նորից համբու-  
րեց ու դուրս եկաւ:

Զիշիլիօն վերադարձաւ հիւանդի մօտ,  
որը կարծես միամտեց և հանգստացաւ: Զի-  
շիլիօյի համար կրկին սկսւեց հիւանդա-  
պահի կեանքը: Նա այլևս չէր լաց լինում,  
բայց խնամում էր նոյնպիսի համբերու-  
թեամբ ու ջանասիրութեամբ, ինչպէս ա-  
ռաջ. խմեցնում էր ինչոր պէտք էր, ուղ-  
ղում էր վերմակը, փաղաքշում էր հիւան-  
դին, խօսում նրա հետ:

Անցաւ էլի երկու օր: Հիւանդի գրու-  
թիւնը քանի գնում աւելի էր վատանում,  
նրա երեսը սևացել և սարսափելի կերպով  
ուռել էր, նա շնչում էր ծանր, տառա-  
պում էր. երբեմն անհասկանալի բառեր է-  
ին դուրս թռչում նրա բերանից: Զիշիլիօն  
սկսեց աւելի ուշադրութեամբ խնամել, աշ-  
քը չընեռացնելով նրանից:

\*.) Սկուզօ—իտալական նախկին դրամ. հաւա-  
սար է հինգ ֆրանկի:

Հիւանդը նոյնպէս աչքը չէր հեռաց-  
նում տղից և մեծ ջանքերով շարժում էր  
աթունքները, կարծես ինչոր բան էր ու-  
զում ասել: Նրա աչքերը կուչ էին գալիս  
ու պղտորւում, բայց նրանց մէջ փայլում  
էր մի անսովոր քնքուշութիւն: Այդ գիշե-  
րը տղան բոլորովին չը պառկեց քնելու:  
Լուսաբացին եկաւ գթութեան քոյրը, նայեց,  
շտապով դուրս գնաց ու նորից վերադար-  
ձաւ: Նրա հետ եկան բժիշկը, իր օգնակա-  
նը և մի հիւանդապահ կի՞ն՝ լապտերը բռնած:

—Մեռնում է,—ասաց բժիշկը:

Զիշիլիօն բռնեց հիւանդի ձեռքը, նա  
մի վայրկեանով բացաւ աչքերը և տղին  
թւաց թէ...

—Նա իմ ձեռքը սեղմեց.—բացական-  
չեց տղան.

Բժիշկը կուացաւ գէպի հիւանդը, որը  
այդ միջոցին ձգւեց: Գթութեան քոյրը պա-  
տից վայր բերեց խաչելութիւնը:

—Մեռած,—բացականչեց Զիշիլիօն:

—Գնա, զաւակս,—ասաց բժիշկը,—քո  
սուրբ գործը վերջացած է: Գնա և բաղ-  
դաւոր եղիր, դու լիովին արժանի ես դը-  
րան: Աստուած քեզ օգնական, գնաս բարով,  
բարի ճանապարհ...

Այդ բոպէին գթութեան քոյրը պատու-  
հանի վրայ դրած բաժակից հանեց ծաղիկ-  
ներն ու տւեց տղին:

—Ուրիշ բան չունիմ քեզ տալու. վերցրն այս ծաղիկները ի յիշատակ մեր հիւանդանոցի, —ասաց նա:

—Շնորհակալ եմ ձեզանից, —պատասխանեց տղան, վերցնելով փունջը ու սրբելով արտասուրճները, —բայց ես հեռու տեղ պիտի գնամ. մանուշակները կը թառամեն... Աւելի լաւ է նրանց թողնեմ իմ խեղճ հանգուցեալին:


Եւ նա ծաղիկները ցրեց հիւանդի անկողնի վրայ:

—Շնորհակալ եմ ձեզանից, քոյրիկ, շնորհակալ եմ, պարոն բժիշկ, մնաք բարով։ Նա դարձաւ դէպի հանգուցեալը և մի ըռպէ մտածեց. թէ ինչպէս անւանէ նրան. յանկարծ նրա բերանից դուրս թուաւ այն թանկագին. անունը, որով անւանում էր նրան այն ծանր օրերին,

—Մնաս բարով, տանտա:

Զիշիլիօն վերցրեց իր կապոցը և դուրս գնաց սենեակից։

Սրշալոյսը բացւում էր երկնքի վրայ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0395013

2145



Գիւնի Տիֆլիս, Վյоро Պечати,

»Мадатовск. 5.